ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԱԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ՔՏՀԱՏՄ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26 սեպտեմբեր 2019թ.

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության կառավարման խորհրդի նիստի (այսուհետ՝ Խորհրդի նիստ) հեռակա քվեարկությանը մասնակցեցին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ֆ.Ցոլակյան – ՀՀ ԱԻՆ Նախարար

Խորհրդի անդամներ՝

Ս. Պապիկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ. Գրիգորյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Վերմիշյան ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Պետրոսյան ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Ա. Դանիելյան Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Ա. Կարապետյան «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր (համաձայնությամբ) տնօրեն

Ս. Թովմասյան «Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետեր դեկան (համաձայնությամբ)

Խորհրդի նիստի հեռակա քվեարկությանը չեն մասնակցել խորհրդի անդամներ՝

Կ. Բրուտյան ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Հ.Ավագյան «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ (համաձայնությամբ)

Քվորումն ապահովված էր:

Հաստատված օրակարգի 7 հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները՝

1.Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման հավելված 2-ով սահմանված օրինակելի ձևի:

Կողմ 10 ձայն, դեմ 0 ձայն (խորհրդի անդամ Ա. Ասոյանի կողմից կատարված դիտարկման հիման վրա կատարված խմբագրմամբ)

2.Ի գիտություն ընդունել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում կատարված ուսումնասիրությունների, բացահայտված ռիսկերի վերլուծության վերաբերյալ հաշվետվությունը.

Կողմ 9 ձայն, Դեմ 1 ձայն, (խորհրդի անդամ Ա. Ասոյան)

3.Հաստատել Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2019 թվականի տարեկան ծրագիրը :

Կողմ 8 ձայն , դեմ 2 ձայն (խորհրդի անդամներ Ա.Ասոյան, Ս. Թովմասյան)

4.Թույլատրել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով բյուջեով նախատեսված պահպանման ծախսերում, ծրագրերում և բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում և գնումների պլանում կատարել փոփոխություններ և դրանք ներկայացնել համապատասխան շահագրգիռ կողմերին՝ առանց խորհրդի լրացուցիչ համաձայնության :

Կողմ 10 ձայն, դեմ 0 ձայն:

5.Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխության կատարմանը :

Կողմ 10 ձայն, դեմ 0 ձայն:

6.Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի մասով գնումների պլանի փոփոխության նախագծին:

Կողմ 10 ձայն, դեմ 0 ձայն:

7.Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին):

Կողմ 10 ձայն, դեմ 0 ձայն:

Օրակարգի վերաբերյալ խորհրդի անդամների դիտարկումները կցվում են արձանագրությանը:

Խորհրդի նախագահ՝ Ֆ.Ցոլակյան
ՀՀ ԱԻՆ Նախարար

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ Ն. Մկրտչյան

ստորագրություն

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

(հիմնավորումներ)

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Ա. ԱՍՈՅԱՆ- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Օրակարգի 1-ին հարց Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման հավելված 2-ով սահմանված օրինակելի ձևի: Օրակարգով հաստատվող ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգի 3-րդ կետը առաջարկում ենք համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված օրինակելի ձևին և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Խորհրդի կազմում ընդգրկվում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) ղեկավարը (տեղակալը), ՀՀ արդարադատության նախարարը (տեղակալը), ՀՀ էկոնոմիկայի նախարարը (տեղակալը), ՀՀ ֆինանսների նախարարը (տեղակալը), ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարը, հրդեհային ու տեխնիկական անվտանգության ապահովման, էներգետիկայի, էներգասպառման, տրանսպորտի, քաղաքաշինության, գեոդեզիայի, քարտեզագրման կամ հողօգտագործման բնագավառներում քաղաքացիների կամ սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, հրդեհային ու

տեխնիկական անվտանգության ապահովման, էներգետիկայի, էներգասպառման, տրանսպորտի, քաղաքաշինության, գեոդեզիայի, քարտեզագրման կամ հողօգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպության ներկայացուցիչը և հրդեհային ու տեխնիկական անվտանգության ապահովման, էներգետիկայի, էներգասպառման, տրանսպորտի, քաղաքաշինության, գեոդեզիայի, քարտեզագրման կամ հողօգտագործման բնագավառների գիտական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ, որոնք չեն կարող լինել համապատասխան բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ենթակայությամբ գործող մարմնի կամ կազմակերպության աշխատակից:»

Օրակարգի 2-րդ հարց

Ի Գիտություն ընդունել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2019 թ-ի 2-րդ եռամսյակի ընթացքում կատարված ուսումնասիրությունների, բացահայտված ռիսկերի վերլուծության վերաբերյալ հաշվետվությունը:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են հրատապ լուծում պահանջող հարցերի առկայության դեպքում: Այսպիսով, կարծում ենք, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների, բացահայտված ռիսկերի վերլուծության վերաբերյալ հաշվետվությունը հաստատելը Տեսչական մարմնի կառավարման խորհրդի այս ձևաչափով անցկացվող նիստում ընդունելի չէ և անհրաժեշտ է այն անցկացնել լսումների միջոցով, ուստի առաջարկում ենք այս հարցը հանել Օրակարգից և ընդգրկել կառավարման խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Օրակարգի 3-րդ հարց

Հաստատել Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2019 թվականի տարեկան ծրագիրը:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են հրատապ լուծում պահանջող հարցերի առկայության դեպքում:

Այսպիսով, կարծում ենք, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության տարեկան ծրագիրը հաստատելը Տեսչական մարմնի կառավարման խորհրդի այս ձևաչափով անցկացվող նիստում ընդունելի չէ և անհրաժեշտ է այն անցկացնել լսումների միջոցով, ուստի առաջարկում ենք այս հարցը հանել:

Խորհրդի անդամ - Ս.Թովմասյան

Օրակարգի 3-րդ հարց

Հաստատել Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2019 թվականի տարեկան ծրագիրը:

Ա.Ծրագրի 4-8-րդ կետերի շարադրանքը կանոնադրական խնդիրների փոքր-ինչ ձևափոխված տարբերակն է և ներկայացված չեն ակնկալվող արդյունքները, իսկ 9-րդ կետը ցանկալի է ներառել միջոցառումների ցանկում:

Բ.Միջոցառումների ցանկում անհրաժեշտ է նշել թե, ինչ պարբերականությամբ կամ կոնկրետ ինչ ժամկետներում են իրականացվելու միջոցառումները: Մասնավորապես, ցանկի 2-րդ և 3-րդ կետերի միջոցառումները պետք է իրականացվեն ըստ անհրաժեշտության, 1, 4, 5 կետերինը՝ հստակ ամրագրված պարբերականությամբ և այլն: 3-րդ բաժնի միջոցառումների համար անհրաժեշտ է նշել կոնկրետ ժամկետներ:

Կառավարման խորհրդի անդամ- Կ.Բրուտյան- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Օրակարգի 1-ին հարց

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգի հաստատում:

Աշխատակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Օրակարգի 2-րդ հարց

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2019թ-ի 2-րդ եռամսյակի ընթացքում կատարված ուսումնասիրություններ, բացահայտված ռիսկերի վերլուծության վերաբերյալ հաշվետվության հաստատում:

Ներկայացված հաշվետվության մեջ նշվում է, որ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, Տեսչական մարմնի հաստիքացուցակի համաձայն, առկա 240 հաստիքից համալրված է 185 հաստիք: Համալրվածությունը կազմում է 77.0%:

Միևնույն ժամանակ, հաշվետվության մեջ որպես խնդիր է բարձրացվում այն, որ 240 մասնագետ կադրային ներուժով աշխատելու դեպքում մեծ թվով տնտեսավարող սուբյեկտներ, այդ թվում՝ բարձր ռիսկայնության, տարիներ շարունակ դուրս կմնան վերահսկողությունից՝ բարձր ռիսկեր պարունակելով ոլորտների անվտանգության ապահովման տեսանկյունից: Հետևաբար, Տեսչական մարմնի հաստիքների առավելագույն թվի վերանայման անհրաժեշտություն կա:

Առաջարկություն

Այս կապակցությամբ առաջարկվում է, մինչև հաստիքների առավելագույն թվի վերանայման հարցը բարձրացնելը ձեռնարկել միջոցներ թերհամալրումը վերացնելու

ուղղությամբ, և քննարկել մարդկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության հարցը:

Իսկ հաստիքների թվի վերանայման անհրաժեշտությունը դիտարկել այն դեպքում, երբ կգնահատվի Տեսչական մարմնի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների մանրամասն հաշվարկ, հիմք ընդունելով ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ կազմված ստուգումների ծրագիրը:

Օրակարգի 3-րդ հարց

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2019 թվականի տարեկան

ծրագրի հաստատում:

Որակի ապահովման վարչության 2019թ. ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Օրակարգի 4-րդ հարց

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ առանց խորհրդի լրացուցիչ համաձայնության, մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով բյուջեով նախատեսված պահպանման ծախսերում, ծրագրերում և բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում և գնումների պլանում ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարելու և դրանք համապատասխան շահագրգիռ կողմերին ներկայացնելու լիազորության տրամադրման մասին որոշման կայացում:

Առաջարկություն

«Տեսչական մարմինների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պետական բյուջեում առանձին տողով արտացոլված տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ֆինանսավորման մեջ

փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Խորհրդի համաձայնությամբ:

Որպես լուծման տարբերակ առաջարկում ենք քննարկել Խորհրդի մեկ որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարելու համաձայնություն տալու հնարավորության հարցը:

Առաջարկում ենք հետևյալ ձևով խմբագրել խորհրդի կողմից կայացվող որոշման տեքստը:

Թույլատրել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով բյուջեով նախատեսված պահպանման ծախսերում, ծրագրերում և բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում և գնումների պլանում կատարել փոփոխություններ և դրանք սահմանված կարգով ներկայացնել շահագրգիռ կողմերին:

Օրակարգի 5-րդ հարց

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու հավանության տալու մասին քննարկում:

Առաջարկություն

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-թիվ 706-Ա որոշման հավելված 2-ով և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 05.03.2019թ. N 6-Լ հրամանի հավելված 1-ով հաստատված տեսչական մարմնի աշխատակազմի հաստիքացուցակի ղեկավար կազմում նախատեսված է ղեկավարի թվով 3 տեղակալ, թվով 3 ղեկավարի տեղակալի օգնական, ինչպես նաև թվով 2 ղեկավարի օգնական:

Մեր գնահատմամբ օպտիմալացման և արդյունավետության տեսանկյունից վերանայման կարիք ունի նման հաստիքների սահմանումը:

Միևնույն ժամանակ աշխատակազմում առկա են թվով 8 վարչություններ և թվով 1 բաժին, որոնք միջինում ունեն համապատասխանաբար թվով 8 և 5 հաստիքային միավորներ:

Ընդհանուր մոտեցումն այն է, որ բաժինները պետք է ունենան առնվազն 7 հաստիքային միավոր, իսկ վարչությունները պետք էբաղկացած լինեն նվազագույնը թվով 2 բաժիններից:

Հաստիքացուցակի համաձայն թվով 240 հաստիքային միավորներից թվով 54-ը ղեկավար, կամ ղեկավարին աջակցող պաշտոններ են այսինքն միջինում յուրաքանչյուր 4 աշխատակցի բաժին է ընկնում 1 ղեկավար, ինչը մեր գնահատմամբ արդյունավետության բարձրացման տեսանկյունից վերանայման կարիք ունի:

Այս կապակցությամբ առաջարկվում է վերանայել հաստիքացուցակը վերը նշված մոտեցումներին համապատասխան:

Օրակարգի 6-րդ հարց

Հավանություն տալ ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի մասով գնումների պլանի փոփոխության նախագծին՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 10.05.2019թ. «Գույքը հետ վերցնելու և ամրացնելու» մասին N 552-Ա որոշումը: Առաջարկվում է քննարկել 4252 հոդվածով հաստատված 3 000 000 /երեք միլիոն ՀՀ դրամը /ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ CPV 50111130-1 / ֆինանսավորումը առանձին տողերով արտացոլել 4264 հոդվածով նախատեսված 14,835 /տասնչորս հազար ութ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամը արտացոլել տողերով:

Նշված հարցի կապակցությամբ առաջարկում ենք խորհրդի համաձայնեցմանը ներկայացնել միայն փոփոխության բովանդակությունը և նպատակը և Խորհրդի համաձայնությունը ստանալուց հետո, ՀՀ պետական բյուջեի 1213 ծրագրի 11002 միջոցառման գծով նախատեսված հատկացումների միջև առաջարկվող վերաբաշխումների վերաբերյալ ծանուցումը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 14-րդ հավելվածով սահմանված կարգին համապատասխան ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն: